ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Մեսրոպ Գրիգորյան, Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) սահմանային պետական վերահսկողության համակարգման բաժնի պետի տեղակալ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Թուրքիայի Հանրապետություն, ք.Անկարա, 2025 թվականի փետրվարի 3-7-ը:

3. Հրավիրող կողմը.

Եվրոպական հանձնաժողովի «Ավելի լավ ուսուցում ավելի անվտանգ սննդի համար (BTSF)» նախաձեռնություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Կենդանիների առողջություն» խորագրով տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցելու նպատակով

5. Քննարկված թեմաները.

1. ԵՄ Կենդանիների առողջության մասին օրենքը (2016/429); Կենդանիների առողջության վերաբերյալ ԵՄ մոտեցումը և քաղաքականությունը
2. Կենդանիների առողջության կանոններ Եվրոպական միություն մուտք գործելու համար (AHL և CDR (EU) 2020/692)
3. Թուրքիայի Հանրապետության փորձը անասնաբուժական հիվանդությունների բռնկումների վերաբերյալ
4. Հիվանդությունների վերաբերյալ իրազեկում և պատրաստվածություն. կենդանիների առողջության կանխարգելման և արտակարգ իրավիճակների պատրաստվածության կարևորությունը

արդյունաբերության, անասնաբուժական իշխանությունների և բոլոր շահագրգիռ կողմերի համար:

5. Կենդանիների անդրսահմանային հիվանդությունների վաղ հայտնաբերում և հսկողություն
6. Արտակարգ իրավիճակների պլանավորում Կենդանիների անդրսահմանային հիվանդությունների համար
7. Հաղորդակցություն մայրուղիներ անասնաբուժական վարչություններում
8. Կենդանիների պատվաստման մոտեցումները և ԵՄ օրենսդրությունը որոշ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման նպատակով անասնաբուժական դեղամիջոցների օգտագործման վերաբերյալ
9. ԵՄ անդամ պետությունների փորձը թռչնագրիպի դեմ պատվաստումների օգտագործման վերաբերյալ
10. Կենդանիների տեղաշարժերի վերահսկում և իրավական լիազորությունների սահմանում
11. Կենդանիների շարժման սահմանափակումներ և հավաստագրում
12. ԵՄ փորձը Կենդանիների հիվանդությունների գոտիավորման վերաբերյալ
13. Մեկ առողջություն կոնտեքստում հանրային առողջության, կենդանիների առողջության և այլ ծառայությունների միջև համակարգման միջոցառումների իրականացում

Գործնական դասընթացների թեմաներն են՝

14. Կենդանիների առողջության վիճակը և հիվանդությունների բռնկամն դեմ կիրառվող պայքարի միջոցառումների ռազմավարությունը ներկայացող երկրում
15. Հիվանդությունների վերահսկման ընթացակարգի մշակում
16. Կենդանիների անդրսահմանային հիվանդությունների կասկածելի դեպքերի ահազանգում
17. Հիվանդությունների վերահսկման միջոցառումների ձեռնարկում հիվանդությունների բռնկումների դեպքում
18. Հիվանդության կասկած և հաստատում, որի շրջանակներում իրականացվել է այցելություն ոչխարաբուծական ֆերմա
19. Պատվաստումների իրականացման ընթացակարգ
20. Սահմանափակող տարածքների գոտիավորման իրականացում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ակտիվ մասնակցել եմ դասընթացներին, մասնագիտական թեմաներով դրական շփումներ եմ ունեցել տարբեր երկրների՝ այդ թվում Թուրքիայի Հանրապետության ներկայացուցիչների հետ: Հարկ եմ համարում նշել, որ Թուրքիայի Հանրապետության գյուղատնտեսության և անտառային նախարարության Ստամբուլի անասնաբուժական հսկողության ինստիտուտի տնօրենի տեղակալ դոկտոր Հաքան Էնուլն առանձին զրույցի ընթացքում առաջարկեց անասնաբուժության բնագավառում սկսել համագործակցություն:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ստորագրությունը, ամսաթիվը 11. 02. 2025թ.